...անալով հասանում է մինչև գիւղը՝ չոր ժամանակին չէ կարողանում ծարաւի մարդը զովացնել իւրեանց այդ տաքացած ջրով և այդպէս աւելի շատ վնասակար կլինէր չափազանց խմելով՝ երբ դիւղացիք օգուտ քաղելիս չլինէին առատ ...ջուրից, որը տանում են վաղ առաւօտը, այգիներում հանած ջրանցքից (արիս) բայց նա պիտանացու չի լինում մինչև չոքի հասանել, և դիմում են դէպի աղբիւրները։ Թէ և կան հինուց մնացած և թէ նոր շինած քանի մի հանող աղբիւրներ, բայց ժողովուրդը իւրեանց անհամաձայնութեամբ ընդհանրական օգուտը չտիրելով, ուշք չէ դարձրել մինչև այժմ նորանց և այդպէս չի բաւականանում ամբողջ գիւղին, որ անա այս տարի էր դրած ածում։ Այս տարուայ դեպի ցամաքելը, շատ այգիների վազներ չորանալը, առողջարար և հանող աղբիւրներին սովորած ժողովուրդի ջրհորի ջուր դրած ածելը և այլն, աւելի երևան էլաւ այս տարի վերջապէս շատ ուրիշ վնասներ զգում էր ժողովուրդը մինչև այսօր ջրի պակասութիւնից, բայց մէկի այգին եթէ չորանում էր միւսինը մօտիկ լինելով ջրից, քիչ էր զղալի լինում իւրեանց քիչ վնասների համար և ոչ իր հարևանի կամ ընկերոջ շատ վնասների համար, եթէ աղքատը դուռալով ջուր է խնդրում ժողովրդից իր այգիի համար՝ այդ զղալի չէ իւրեանց, որովհետև նորանք իւրեանց բաղատուր են համարում երբ տեսնում են իւրեանց մի բանով աւելի լինելը. աղքատ մարդերից, «եթէ նա էլ ինձպէս պէտք է լինի էլ ես ինչ իմ հարստութիւնովս» ասում է մեր փոքր մինչ հարուստ գիւղացին։ Իմ կարծիքով Աստուած այս տարի մեր գիւղի վերայ աւելի քաղցր աչքով նայից քան անցած տարիները, ինչու, —որովհետև ջրի պակասութիւնը հարուստների և ազնուականների քթին էլ դիպաւ, անցած տարիներում, որ ջուրը ըստ մեծի հարուստների և ազնուականների այգիներումն էր լինում, այս տարի թէ և աւելի նորանք էին օգուտ քաղում այն մի փոքրիկ առուակից որի վերայ էր ամբողջ գիւղացիների յոյսը, բայց դարձեալ շատ վնաս տուեց նորանց ուստի համաձայնութեան և ցածր դասի ժողովրդեան հետ ասելով, որ ուզիղ է մի ճար դէպք է անել ջրի համար։ Կային այս տարի այնպիսի մարդեր գիւղացիներից, որոնք ոչ թէ իւրեանց հացի կամ գինու ½ մասը չտացան, ինչ որ պէտք է տուացել էին, այլ և հացի սերմի կէսը տացան և այդու վազներից շատը չոչացան, որ և պիտանացու էլ չեն դալ տարին, անա սորա համար եմ ասում, որ այս տարի Աստուած աւելի քաղցր աչքով նայից մեր գիւղի վերայ, որ արդէն սարսափած են անպատճառ ջրանցք բանալ Բորչալուի գնալից։ Շատերը, շատ մեծի մասին ջրից հետ ժողովրդը համաձայն են տալ տասանորդ իւրեանց բոլոր այգիների և արտերի արդիւնքից տարբերով, բայց ժողովրդի համարեա կէսից աւելը չեն կամենում այդ, որովհետև աչքի առաջ են ունենում իւրեանց տասը տարիով համարեա զրկի մնալը այգիներից,—և այդ իրաւացի կլինէր եթէ միայն չորոշեն ամեն մի այգուց մի որոշեալ տարեկան գումար կամ գինի կամ հաց, որը դրուած չէր լինի ամենի համար տալը, քան թէ պանջել տասանորդ ամեն մի չնչին բանից։ Թէ և այս տարի եկաւ մի անդրլայցի և տեսութիւն արաւ այդ ջրանցքի չլինելու համար և խնդրեց ժողովրդից, ինչպէս լսեցի 1,000 ր. խստանալով այն 15—20 վերստ հեռաւորութեամբ ջուրը, բերել գիւղումը եթէ կաան նորան առաջուց 1000 ր. ոչ չդիտեմ ինչպէս, անդրլայցին նեղացել է ժողովրդեան չիմութիւնից և թողել է այդ գործը, իսկ ժողովուրդը անհոգ է գտնուել այդտեղ. վերջապէս շատ հեշտ և չուտով կշինուի այդ ջրանցքը, բայց ժողովուրդը իւր անհամաձայնութեամբ մնալ է մինչև այսօր ջրի և թէ ուրիշ շատ պակասութիւնների մէջ. ընդհանուրի օգուտ փնտռող կայ այստեղ, ամէնը աշխատում է միայն իւրեանց համար, նա նմանվում է այն ժողովրդական առասպելին թէ՝ «ոչ իմ մի հարթն եմ կամենում և ոչ արևանիս երկուքը». և ուզիղ է մեր ժողովուրդը ամենում է կամ բոլորը ի միասին աղքատ լինեն կամ հարուստ իսկ եթէ աւելի կարողութիւն ունի աշխատում է աւելի հարուստ լինի ոչ թէ իւր ...թիւնը աւելացնելով, այլ առանց աշխատանքի կամենում է, որ վնասի մէկին, որ իրեն պանից հարուստ լինի և այսպէս միշտ այդպիսի ...դարեր տեղը ժողովուրդը օրէցօր աղքատանում է. բայց ինչպէս երևում է այս տարի այնքան անասելի վնասը բոլորովին էլ զգալի եղաւ և ...սկացան անհամաձայնութեան վնասները, կարծես հասկացան, որ ընդհանուրի մէջ է անհատի ...ին և անհատների վնասը ընդհանուրինը է և ...սկաւակ. նորանք շատ հասկանում են ջրանցք ...նելու օգուտը. էլ ոչ տենդով մնալով պատաներ կլինեն, ոչ այնքան ամառ ժամանակը կեղ...ա և անմաքուր աղպեր կլինեն թափուած փոզոցներում, վերջապէս շատ ուրիշ բաներ, հէր մընաց վար ու ցանքի տասնապատիկ աւելնալը, որ ինքը ժողովուրդը շատ լաւ է հասկանում է այդ։

Այս տեղի կլիման առողջարար է և եղանակը զանազանվում է Թիֆլիզի եղանակից միայն նորանով, որ այստեղ ամառը քիչ աւելի զով է լինում օգուտ քաղելով Լալուարից փչող զով քամիից և մասամբ այդիների բաղմութիւնից և այդ պատճառաւ խաղողը և ուրիշ մրգեղենը քիչ աւելի ուշ է հասնում քան Թիֆլիզում, իսկ ձմեռը նոյնպէս աւելի երկարատև է լինում քան Թիֆլիզում։ Նամակս երկարանալով՝ վարելահողերի և այգիների մասին յետոյ։

Արշակ Ցատուրեանց

Պ. Խմբագիր։

Գործակատար բարեկրօն հայր Գ...եանը կարդալով Մշակի 7-գ համարին մէջ Ախլքալաքէն խրկուած նամակը, սաստիկ վրդովեր է, ադոր համար ատ և անդ նամակագրութիւններ կրնէ այդ լուրը ստելու համար։ Այդ պատճառով առաջնորդմէ իմ շնորհակալութիւնս տալով այդ անծանօթ նամակագրին՝ հայրենիքին նախանձախնդիր ըլլալուն համար, կը փութամ հրապարակով բողոքել, որ այդ բարեկրօն քահանան զիս բազմատեսակ չարչարելէն ետքը, հազիւ յիսուն ռուբլիի դիջաւ լուսաւորչական հայ երիտասարդս ամուսնացնել հայ օրիորդի մը հետ։ Կը զարմանամ, զիս տարօրինակ չարչարելէն ետքո, վերջապէս զիս 50 ռուբլի չը վճարելուս համար հայոց եկեղեցւոյ մէջ պսակել անարժան համարողով. յայժմ կը յանդգնի եղեր սուտ հանել սա ճշմարտութիւնը և որ աւելի ծաղրելին է, զիս յոն, կաթոլիկ և չը դիտեմ ինչեր կանչելով, իբր թէ պսակուելէս ետքը փախեր եմ հրատարակել կը կամի։

Կը հաւատաք եթէ ըսեմ, իմ ամուսնանալէս ետքը, երբ կինս մեծի պահոց առթիւ կուզէ խոստովանիլ Տնորհիւ այդ բարեկրօն գործակատարին՝ Տէր Ս.. Ա...քահանան զանիկայ չի խոստովանցուներ, իբրև անարժան այդ խորհրդին։

Պանդուխտ երիտասարդ
Սարգիս Պետրոսեան Ղազասախալեան
Մարտի 6, Ախալքալաք։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ Թիֆլիսի հայ դերասանական խումբը այս ամսի 23-ին քաղաքական թատրոնում պիտի տայ մի երաժշտական հայ-գրական երեկոյ, որտեղ կը մասնակցի և երաժշտապետ Տրուֆին։

***

Լսում ենք նոյնպէս, որ մի և նոյն խումբը այժմ զբաղուած է Շիլլերի «Աւազակներ» անուանով նշանաւոր դրամայի պատրաստութեամբ, որը պիտի ներկայացնեն Զատկի տօն օրերին։ Ցանկալի կը լինէր, որ մեր դերասանները բոլոր միջոցները գործ դնէին ըստ կարելւոյն օրինաւորապէս պատրաստելի, որով կապացուցանէին թէ ինչ նշանակութիւն ունին մեր բեմի համար թարգմանական գրուածները։ Այդպիսի նշանաւոր պիեսայի յաջողութիւնը կարող էր հիմը դառնալ մի եւրոպական բէպերտուար սեփականացնելու...։

***

Մենք մինչև այժմ «Դատարակ» տնտեղի վրա, որ պիտի թէօդոսիայի մէջ հրատարակվէր, ոչինչ չենք լսում։ Ասում են որ խմբագիրը մի յայտարարութիւն է հրատարակել, որտեղ յայտնում է թէ բաժանորդների սակաւաթիւ լինելու պատճառով, յետ է գցում իր հրատարակութիւնը քանի մի ամսով։ Մենք կարծում ենք, որ այդ տեսակ գործում սպասել բաժանորդների աւելանալուն անգործնական է, այլ խմբագիրը, թէև վնաս կրէր, պիտի չտապի հրատարակել իր առաջին համարը, որ հասարակութիւնը տեսնի, դատողութիւն անէ, հաւանի և այնուհետև մեծ թուով գրվի...։

***

Ղ.ղլարից գրում են մեր լրագրին, որ փետրվարի 6-ին քաղաքս թատրոնասէրների խումբը ներկայացումն տուեց յօգուտ տեղւոյս հոգեոր օրիորդաց դպրոցի, իսկ փետրվարի 17-ին երկրորդ ներկայացումն յօգուտ աղքատաց։ Առաջին ներկայացումն ծախքը հանած՝ 240 ռուբլի մուտք ունեցաւ, երկրորդը՝ 320 ռուբլի, որից 200 բաժանեցին աղքատներին, որք այս տարվայ թանգութեան պատճառով խիստ թշուառ դրութեան մէջն են, իսկ 120 ռ. յարմար տեսան ասլ նոր շինուելու աղքատաց հիւանդանոցին, որպէս օժանդակութիւն։ Ներկայացրած պիէսներն էին՝ «Պէպո» հեղ. Սունդուկեանցի, «Սէրը բժիշկ է» և «Պիպոի սկճուր»։ Երկրորդ ներկայացմանը տուին «Ենինոի Նշնուիլը» «Վարժապետ» և «Ակամայ բը ժիշկ»։ Ներկայացնողների թում կային տիկիններ և օրիորդներ՝ տ. Թամար Կամկաճեանց, օր. Մարգարիտ Ասլանեան և օր. Աշխէն Դոլգեան։

***

Բագուից գրումեն մեզ՝ Մարդասիրական ընկերութեան տպարանից այս օրերում դուրս եկաւ «Հնգկացեայ անցքը անմարդաբնակ կղզիներում» վերնագրով գրքոյկը։

***

Նոյն քաղաքից հաղորդում են որ՝ ջրօրհնէքի օրը Բագուի քահանաները 17 տուն շրջել են առանց մի կոպէկ առնելու և բացի սրանից, նոքա օգնել են իրանց աղքատ դրպանից քանի մի հայ աղքատիկ գերդաստանաց։

***

Երևանից գրում են մեզ՝ մօտ օրերումս ստացայ Թէհրանի Ռուսաց դեսպանատունում ծառայող բարեկամից մի նամակ, որով հաղորդում է մի ուրախալի լուր գուցէ մեր ազգայնոց շատերին անծանօթ մի կտակի մասին։

Կալկաթացի հայազգի իշխան Մանուկ Գրիգորեանը 1825 թւին թողեց տեղային անգլիացւոց բանկումը 25,000 ռուբլի դրամ, որը կտակել էր նա յանուն Սուրբ Էջմիածնի։ Ցիշեալ գումարը իւր տոկոսով մինչև ներկայ 1872 թուականը դոյացրուց 44,000 մանէթ Ռուսաց արծաթ, որը այժմ ստացել է Թէհրանի Ռուսաց դեսպանատունը Մայր Աթոռին հասցնելու համար։

Բայց որպէս լսում ենք տակաւին Ս. Էջմիածնայ, թէ Սինոդը և թէ միաբանութիւնը այդ մասին ոչինչ տեղեկութիւն չունեն։

***

Պատասխանելով Кавказъ լրագրի Հ. Մ. յոդվածագրի մեղադրանքներին, թէ մենք չատապէցինք գնել արվեստագործական ուսումնարանին վերաբերեալ պրօէկտը, նախ քան նա տպվէր, Тифлисскій Вѣстникъ լրագիրը ասում է՝ «Մենք ուրախ կը լինէինք, սպասել, եթէ հաւատի լինէինք, որ պրօէկտը կը տպվի (որի անհրաժեշտութեան վրա շատ անգամ ցոյց է տուել «Մշակ» լրագիրը) նախ քան քննադատութիւնը կը դառնայ անօգտաւէտ, որովհետև պրօէկտը կամ կընդունվի կամ կը մերժվի մասնաժողովից, այսինքն երկու դէպքում ևս, երբ ամեն կրիտիկը աւելորդ կը լինի և կը յիշեցնի «ընթրիից յետոյ խարդալը»։ Ինչպէս յայտնի է ներկայ դէպքում այնպէս էլ կատարվեցաւ՝ մասնաժողովը արդէն ունեցել է նիստ, իսկ պրօէկտը դեռ ոչ մի տեղ տպած չէ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՌՕՄԻ ՊԱՊԸ ԵՒ ԵՒՐՕՊԱ

Քանի գնում է, կաթոլիկութեան թշնամիների թիւը աւելանում է Եւրոպայում։

Իտալիայում, որտեղ պապութիւնը կորցրեց իր աշխարհական իշխանութիւնը, հրատարակվում է մի օրէնք որ պարտաւորում է ընդհանուր զինուորագրութեան և հոգևորական դասը։ Նոր վանքերը արգելված է հիմնել և հոգևորականութիւնը զրկվում է ժողովրդական ուսումնարաններ կառավարելու իրաւունքից։

Գերմանիայից եղուխները աղմկվում են, կաթոլիկ հոգևորականութիւնը իրաւունք է կորցրել հսկել ուսումնարանների վրա և այդ իրաւունքը պետութիւնը իրան է սեփականացրել...

Շվէյցարիան չէ կամենում հպատակել Հռոմի աթոռի կամայականութեանը և հրատարակում է մի օրէնք, որի զօրութեամբ ինքն ժողովուրդը պիտի իր համար եպիսկոպոսներ և քահանաներ ընտրէ։

Իսպանիան որ այդքան ժամանակ հոգևորական ազդեցութեան տակ է եղել, փորձում է հիմնել մի աշխարհական պետութիւն ազատ քահանաների ազդեցութենից։

Ունգարիան հրատարակում է մի օրէնք եղուխների աքսորման վերաբերութեամբ, Պէստ քաղաքի համալսարանից պիտի վերցնվի աստուածաբանական բաժինը, որովհետև ինչպէս ասված է ազատամիտ կուսակցութեան ծրագրի մէջ, աստուածաբանութիւնը գիտութիւն չէ։ Ունգարիան կամենում է մայնել քաղաքական ամուսնութիւնը...

Այդ տեսակ գրութեան մէջ է Եւրոպան։ Պապը տեսնում է որ սուրբ Աթոռի թշնամիների թիւը օրից օր աւելանում է։

Անցեալ տարվայ դեկտեմբերի 22-ին կարդինալների ժողովում ասած ճառախօսութեան մէջ Պապի բերանից այդ առարկայի վերա լսվեցան սաստիկ գանգատներ։ Պիոս IX-գ կէս աշխարհին բացարձակ պատերազմ յայտնել։ Նա չէ նկատում որ ինքն է մեղաւոր թէ բարոյական նշանակութիւն է կորցրել, թէ կամենալով իրան բարձրացնել, ընդհակառակն ինքն իր իշխանութիւնը կորցրել է։ Նորա թուլութիւնը աշխարհական իշխանութեան կորստեան մէջ չէ բացատրվում, բայց նորա թուլութեան պատճառը այն է, որ պապութեան հիմնարկութիւնը յետ է մնացել ժամանակից և անտարբերել են կաթոլիկ եկեղեցու մէջ նոր տարրինակ ժամանակին անյարմար վարդապետութիւնները...

Նորա կարծիքով աշխարհը փչացել է և չէ կամենում նրանից խորհրդներ ընդունել... Գերմանիայի վերաբերութեամբ նա ասում է, թէ Գերմանիայի կայսրը չէ հաստատում որ իր բոլոր հպատակներից կաթոլիկները ամենահաւատարիմ տէրութեան հպատակներ են... Այդ ինչպէս է եղել, որ Գերմանիայում կաթոլիկները ամենահաւատարիմ հրպատակներ են, հարցնում է „Kölnische Zeitung“ լրագիրը. երբ որ մենք տեսնում ենք, որ գլխաւորապէս Եւրոպայի բուն կաթոլիկ երկիրներում ամենից յաճախ լեգաեոնութիւններ են լինում, գլխաւորապէս Իսպանիայում, Իտալիայում ու Ֆրանսիայում ժողովուրդը շապիկի պէս է փոխում տէրութիւնները, գլխաւորապէս Ամերիկայի կաթոլիկ հանրապետութիւնների մէջ, մէջտեղն և հարաւային Ամերիկայի հանրապետութիւններում, ամենից դժուար է հաշուել քաղաքացիների տեսական հաւատարմութեան վրա այս կամ այն եղած սահմանադրութեանը...

Հռոմի պապը իր ճառախօսութեան մէջ չէ թագցնում իր անբարեսիրութիւնը և չէ քաշվում իրան Քրիստոսի փոխանորդ երկրիս վրա անվանելուց յետոյ, ամենասովել հայհոյանքներ արտասանել այս կամ այն ընդիմադրող կաթոլիկ համայնքի վերաբերութեամբ։

Նա չէ մոռացել ուժանացնել և մեր հայերին իր կապիտ հայհոյանքներին՝ „Ինձ սխրալի է յիշել, ասում է նա, որ այդ անամօթ հայերի փոքրիկ խումբը, գլխաւորապէս Պ. Պարում, աշխատում է յանդգնաբար, բռնի կերպով և խորամանկութեամբ ձնշել իր ազդեցութեամբ կաթոլիկների մեծ մասը որը մնացել են հաւատարիմ, հեռացնել նրանց բարոյական պարարից։ Իսանդ դ ա ւ ա ճ ա ն խորամանկութեամբ, կաթոլիկների սուտ անունով, նրանք ապստամբվում են մեր բարձր իրաւասութեան և օրինական պատարիարքի դէմ։ Նրանք կարողացան գրաւել մարմնական իշխանութիւնը, հազիւ ցոյց տուին, ընտրեցին իրանց համար մի ուրիշ պատարիարք և զրկեցին կաթոլիկութիւնը այն իրաւունքներից, որը մինչև այժմ պայմանագրերի զօրութեամբ, հովանաւորում էին նրանց գոյութիւնը“։

Այդ հայհոյանքներ է թափում սուրբ հայրը և մեր հայրենակիցների վերա։

Պապը լոյս չէ կորցրում որ իր խօսքերը ազդեցութիւն կունենան և իր սկսած պատերազմից յետ չէ ուզում կանգնել...։ Բայց աշխարհը փչացած է և չէ կամենում դաս առնել այդ տեսակ քարոզներից...

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Տաճկաստանի Հայերը մի բախտաւոր ներկայի վերայ են կանգնած։ Բայց ցաւելով պէտք է խոս-